

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆԱԻՐԱ ՊԱՎԼՈՒՇԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ և ԴՐԱ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՆԱՐԳԵԼՄԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԺԳ 00.01-Մանկավարժության տեսություն և պատմություն մասնագիտությամբ  
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր **Ռ. Ն. Ազարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների  
դոկտոր **Ի. Կ. Կարապետյան**

մանկավարժական գիտությունների  
թեկնածու **Մ. Կ. Մարության**

Առաջատար կազմակերպություն՝

**Երևանի Կ. Բոյունովի անվան  
պետական լեզվաբանական  
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ.  
սեպտեմբերի 27-ին՝ ժամը 14.00-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության  
065 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության  
ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թվականի օգոստոսի 26-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական  
խորհրդի գիտական քարտուղար,  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

 ազարյան

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը.** Հայտնի է, որ մարդու զգայական բոլոր օրգաններից տեսողությունը համարվում է առավել կարևոր: Տեսողությունը բնության հրաշալի պարզև է, որիչնորհիվմենք ընկալում ենք արտաքին աշխարհն իր բոլոր գույներով: Տեղեկատվության 80 %-ից ավելին մարդն ստանում է աչքի միջոցով /Մ. Ս. Сеченов, 1935/: Դրա համար էլ տեսողության պահպանումը և դրա խանգարումների կանխարգելումը համարվում է բժշկության, ընդհանուր, հատուկ մանկավարժության և հոգեբանության կարևոր խնդիրներից մեկը:

Նախադպրոցական տարիքի երեխաների վաղ տեսողական ծանրաբեռնումը /խաղը փոքր, ոչ վառ խաղալիքներով, մանր տառեր, փոքր նկարներ դիտելը, համակարգչային խաղերով տարվելը և այլն/, որը կատարվում է վատ լուսավորության պայմաններում, տեսողական աշխատանքի և աչքի հանգստի պայմաններին, կանոններին և նորմերինչհետևելը կարող են առաջ բերել տեսողության իջեցման և կարճատեսության /Б. И. Коваленко, Н. Б. Ковалнеко, 1962; А. Н. Гнеушева, 1982, В. П. Ермаков, Г. А. Якунин, 1990; Ռ. Ս. Ազարյան, 2008; Օ. Ս. Панков, 2011, այլք/:

Մանկական տարիքում տեսողության խանգարումը հանգեցնում է առողջության վատացման, հոգեֆիզիկական զարգացման երկրորդային խանգարումների (Մ. Ս. Земцова, 1967, Л. И. Солнцева, 1980, Р. Н. Азарян, 1990, Б. К. Тупоногов, 2004, Ս. Կ. Մարության, 2010 և այլք): Թույլտեսողությունը պատճառ է դառնում անձնային այնպիսի որակների ձևավորմանը, ինչպիսք են պարփակվածությունը, եսասիրությունը, անվճռականությունը, սեփական ուժերի հանդեպ անվստահությունը և այլն (Л. И. Солнцева, 1967, В. З. Денискина, 1983, А. Г. Литвак, 2006, Л. В. Мардахаева, Е. А. Орлова, 2012 и др/): Այս ամենը բավականին դժվարացնում է երեխաների ճանաչողական, խաղային, ուսումնական, հաղորդակցական, սոցիալկենցաղային և գործունեության այլ տեսակների զարգացումը:

Կապված վերոնշյալի հետ՝ պարզ է դառնում, որ երեխաների տեսողության պահպանումը, նրա խանգարումների ժամանակին կանխարգելումը պատկանում են ժամանակակից հասարակության սոցիալական կարևոր հիմնախնդիրներին: Սրանով էլ առաջին հերթին պայմանավորված է հետազոտվող հիմնախնդրի արդիականությունը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ գիտամանկավարժական գրականության մեջ զրեթե ուսումնասիրված չեն նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և նրա խանգարումների կանխարգելման մանկավարժական մոտեցումները և պայմանները, որոշված չեն ուսումնասիրվող հարցերի շրջանակներում տեսողության խանգարումների կանխարգելման աշխատանքների դրվածքը, մշակված չեն հիմնախնդրի լուծման տեսական մոտեցումները և գործնական

ուղիները: Այս խնդրի տեսական և գործնական անբավարար մշակումը բավականին դժվարեցնում է նախադպրոցական հաստատություններում և ընտանիքում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման մանկավարժական աշխատանքների կազմակերպումը և անցկացումը: Դրա համար էլ այս հիմնախնդրի ուսումնասիրությունը, նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարման կանխարգելման համար տեսական մոտեցումների և գործնական ուղիների ամբողջական համակարգի մշակումը կնպաստի տեսողության պահպանմանը, ճանաչողական, խաղային, ուսումնական, հաղորդակցական և այլ գործունեությունների ակտիվացմանը:

Վերոնշյալն էլ սահմանում է ուսումնասիրվող խնդրի արդիականությունը, նրա տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը:

**Հիմնահարցի մշակվածության աստիճանը:** Երեխաների տեսողության պահպանման հիմնահարցը միշտ էլ գտնվել է գիտնականների, մասնագետների և գործնական աշխատողների ուշադրության կենտրոնում: Շատ հեղինակներ (Ս. Օ. Մայգել, 1932; Ս. Ի. Վավիլով, 1950; Ա. Ն. Գնեուշևա, 1982; Օ. Պ. Ժանկով, 2011 և այլք) նշում են, որ մանկական տարիքում տեսողության խանգարման արմատական պատճառներն ընկած են տեսողական և մտավոր լարվածության հիմքում, հատկապես այն կապված է անբարենպաստ պայմաններում աչքի աշխատանքի հետ:

Վ.Ֆ. Աֆանասևի (1971), Ռ. Ն. Ազարյանի (1990), ՄալոՖեևի (1999), Ռ. Տ. Սաֆարյանի (2009) և այլնի կողմից հաստատված է, որ մանկական տարիքում աչքի տեսողական խանգարումները վնասում են երեխայի հոգեֆիզիկական զարգացման ընթացքը, հանգեցնում են զարգացման երկրորդական խանգարումների, որը բացասական է ազդում ճանաչողական, խաղային, ուսումնական և գործունեության այլ ձևերի զարգացման վրա: Այսօր առկա է հիմնախնդրի վերաբերյալ ոչ բավարար մշակվածություն, մասնավորապես ուսումնասիրված չէ մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների տեսողական աշխատանքի պայմաններն ու բնույթը, որոշված չէ այս հարցերի վերաբերյալ դաստիարակների և ծնողների տեղեկացվածության մակարդակը, մշակված չեն երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման տեսական տեսանկյունները, մանկավարժական պայմաններ և օրինակելի համակարգը: Այս հարցերի լուծումը դառնում է երեխաների տեսողության պահպանման հիմքը:

**Հետազոտության օբյեկտը** նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման գործընթացն է:

**Հետազոտության առարկան** երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման միջոցները, մեթոդները և մանկավարժական մոտեցումներն են:

**Հետազոտության վարկածը:** Նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելմանն ուղղված աշխատանքներն արդյունավետ կլինեն, եթե.

- բացահայտվեն երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման հիմնախնդիրների վերաբերյալ ծնողների և դաստիարակների տեղեկացվածության մակարդակը,

- որոշվեն նախադպրոցականների գործունեության տարբեր ձևերում (խաղային, ուսումնական, սոցիալ-կենցաղային և այլն) տեսողական աշխատանքի խանգարումների մանկավարժական պայմանները,

- մշակվի նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման օրինակելի համակարգ և մանկավարժական մոդել:

**Հետազոտության նպատակը** գործունեության տարբեր ձևեր ծավալելիս նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական աշխատանքի պայմանների, ձևերի ուսումնասիրումը, տեսողության պահպանման ու դրա խանգարումների կանխարգելման տեսական մոտեցումների մանկավարժական համակարգի մշակումը:

Հետազոտության օբյեկտի, առարկայի, վարկածի և նպատակի համաձայն սահմանենք հետազոտության հետևյալ հիմնական **խնդիրները`**

1. ուսումնասիրել հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ առկա գիտամանկավարժական գրականությունը և փորձը,

2. բացահայտել նախադպրոցական հաստատություններում և ընտանիքներում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքի արդի վիճակը,

3. որոշել մանկապարտեզի դաստիարակների և ծնողների իրազեկվածության մակարդակը` երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման հիմնահարցերի վերաբերյալ,

4. մշակել նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման տեսական մոտեցումներ և մանկավարժական օրինակելի համակարգ:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքն** են կազմում հետևյալ գիտական սկզբունքները և դրույթները`

- զարգացման առաջնային արատի և երկրորդական խանգարումների տեսությունը (Л. С. Выготский, 1983),

- գործողությունների և հասկացությունների տարիքային ձևավորման տեսությունը (П. Я. Гальперин, 1977 ),

- երեխաների տեսողության պահպանման հիգիենայի պահանջները (Е. М. Белостоцкая, Е. М. Белостоцкий, 1953; А. В. Рославцев, Ж. И. Белецкая, 1965, О. П. Панков, 2011 և այլք):

Մեր հետազոտության խնդիրների լուծման համար կիրառվել են **հետևյալ մեթոդները`**

- գիտամանկավարժական գրականության ուսումնասիրում և տեսական վերլուծություն,

- երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման ուղղությամբ մանկապարտեզների դաստիարակների և ծնողների աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և ընդհանրացում,

- հետազոտության հոգեբանամանկավարժական մեթոդներ՝ հարցում, գրույց, դիտում և անկետավորում,

- հետազոտվող խնդրի շրջանակներում մանկապարտեզում իրականացվող աշխատանքների պլանավորման և հաշվետվության փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն,

- մանկավարժական հավաստիացնող գիտափորձ,

- արդյունքների վերլուծման և ընդհանրացման վիճակագրական մեթոդներ:

#### **Հետազոտության գիտական նորույթն է՝**

- որոշվել են գործունեության տարբեր ձևերում նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական աշխատանքի պայմանները և բնույթը,

- ուսումնասիրվել է մանկապարտեզներում և ընտանիքում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքի դրվածքը,

- որոշվել է երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման հարցերի վերաբերյալ դաստիարակների և ծնողների իրազեկվածության մակարդակը և գործնական կարողությունները,

- մշակվել են նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման վերաբերյալ տեսական մոտեցումներ, դրույթներ և սկզբունքներ,

- մշակվել են նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման վերաբերյալ օրինակելի համակարգ և մանկավարժական մոդել:

#### **Հետազոտության տեսական նշանակությունը** սահմանվում է

նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքների կազմակերպման և անցկացման համար առաջարկվող մանկավարժական մոտեցումների, պայմանների և օրինակելի համակարգի արդյունավետության, ինչպես նաև հետազոտության գործընթացում ստացված արդյունքների տեսական հիմնավորվածությամբ:

#### **Հետազոտության գործնական նշանակությունը** հիմնավորվում է

մանկապարտեզում և ընտանիքում երեխաների տեսողության պահպանման ու դրա խանգարումների կանխարգելման աշխատանքների կազմակերպման տեսական մոտեցումների, գործնական ուղիների, օրինակելի համակարգի մշակմամբ, ինչպես նաև գործնականում երեխաների նախադպրոցական դաստիարակության արդյունքների ներդրմամբ:

#### **Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները՝**

1. մանկապարտեզում և ընտանիքում նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքի դրվածքն ունի որոշակի թերություններ. ստեղծված չեն անհրաժեշտ պայմաններ երեխաների տեսողական աշխատանքի համար, (աշխատասեղանի վերին հատվածի և խաղանկյան վատ լուսավորվածություն, չեն պահպանվում տեսողական աշխատանքի ռեժիմը և

աչքի հանգիստը, գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքի կանոնները),

2. նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման հարցերի վերաբերյալ առկա է դաստիարակների և ծնողների իրազեկվածության ցածր մակարդակ:

3. նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման տեսական դրույթների, գործնական ուղիների և օրինակելի համակարգի հիման վրա մերկողմից մշակված մանկավարժական մոդելը ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման ամբողջական համալիրը:

Հետազոտությունն անցկացվել է **երեք** փուլով:

**Առաջին փուլում (2007-2008թթ)** իրականացվել է գիտամանկավարժական գրականության ուսումնասիրում, հիմնախնդրի մշակվածության աստիճանի բացահայտում և վերլուծում:

**Երկրորդ փուլում (2008-2010թթ.)** բացահատվել և վերլուծվել են մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքների արդյունավետ կազմակերպման ձևերն ու անցկացման մանկավարժական պայմանները, ձևակերպել են հետազոտության տեսական մոտեցումներն ու հիմքերը:

**Երրորդ փուլում (2010-2012թթ.)** անցկացվել է մանկավարժական մշտադիտարկում, արդյունքների ամփոփում, վերլուծում: Ձևակերպվել են հետազոտության հիմնական եզրակացությունները, ձևավորվել են ատենախոսությունը և հավելվածը:

**Հետազոտության բազա են** հանդիսացել Գյումրու թիվ 8, թիվ 1 և թիվ 13 մանկապարտեզները և թվով 75 ընտանիքներ:

Հետազոտության **արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը** երաշխավորվում են նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման վերաբերյալ հոգեբանամանկավարժական, գիտական գրականության, մշակված հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, մասնագիտական փորձի համակողմանի ուսումնասիրությամբ և արված ընդհանրացումներով, հետազոտության տեսական հիմունքների հիմնավորված բնույթով, հետազոտության հիմնախնդրին, նպատակին ու խնդիրներին համարժեք տեսական և էմպիրիկ մեթոդների համալիր կիրառմամբ, իրականացված մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալների նպատակաուղղված վերլուծությամբ, ընդհանրացմամբ, հետազոտության հիմնական արդյունքների փորձաքննությամբ, եզրակացությունների հիմնավորմամբ, տվյալների մշակման ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրվել ու **փորձաքննության** են ենթարկվել տարբեր գիտական կոնֆերանսներում և համաժողովներում, Գյումրու Ս. Նալբանդյանի անվան պետական

մանկավարժական ինստիտուտի մանկավարժության, նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոններում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը** Ատենախոսական աշխատանքը կազմված է 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն ներկայացված է 140 համակարգչային էջով:

Ատենախոսական աշխատանքը պարունակում է 5 աղյուսակ, 16 նկար և 6 հավելված :

## **ԱՏԵՆԱՒՃՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքի **ներածության** մեջ հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, բացահայտվել է նրա մշակվածության աստիճանը, ներկայացվել են ատենախոսության հետազոտության օբյեկտը, առարկան, հիմնական վարկածը: Ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, որոշվել են ատենախոսության մեթոդները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ներածության մեջ առաջադրվել են նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության հավաստիությունն ու աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրներն ու մեթոդները»**, բաղկացած է չորս ենթագլուխներից: **Առաջին ենթագլխում՝ «Տեսողության դերը մարդու կյանքում և դրա խանգարումների հետևանքները»**, ներկայացված են տեսողական զգայության և արտաքին աշխարհի տեսողական ընկալման նշանակությունը մարդու կեսագործունեության մեջ: Մարդկային աչքն ունի շրջակա աշխարհում կողմնորոշվելու հիասքանչ հնարավորություն. այն առանձնացնում է առանձին առարկաներն ու նրանց միջև եղած տարածությունը՝ ըստ լուսավորվածության աստիճանի: Բացի այդ տեսողության շնորհիվ մարդը կարողանում է հետևելի գործողությունների և շարժումների ճիշտ կատարմանը: Տեսողության իջեցումը մանկական տարիքում դանդաղեցնում է երեխայի հոգեֆիզիկական զարգացման ընթացքը և հանգեցնում է մի շարք երկրորդական խանգարումների՝ ֆիզիկական, շարժողական ոլորտի, տարածության մեջ կողմնորոշման, մի շարք անձնային որակների, հոգեկան գործընթացների և այլն:

**Երկրորդ՝ «Երեխաների տեսողության խանգարումների հիմնական պատճառների և ձևերի տեսական վերլուծությունը» ենթագլխում** ներկայացված են աչքի և այլ օրգանների գործունեության պաթոլոգիկ խանգարումները, որոնք կարող են առաջ բերել տեսողական խանգարումներ՝ կարճատեսություն, հեռատեսություն, աստիգմատիզմ, շլություն:

Վատ տեսողություն կարող է ունենալ նաև առողջ մարդը, քանի որ տեսողության խանգարման արմատական պատճառը տեսողական և մտավոր լարվածությունն է (Յ. Ի. Морозова, Ա. Ա. Яковлев, 1982; Յ. Ի. Белецкая, Ա. Ի.



Гнеушева 1982, О. П. Панков 2011): Վերջին տարիների մի խումբ հետազոտություններ վկայում են այն մասին, որ տարեց-տարի մեծանում է տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաների թիվը (Н. И. Кудряшова 1998): Աչքի հիվանդությունները կարող են տարբեր ծագում ունենալ՝ վատ ժառանգականությունը, մոր խրոնիկական հիվանդությունները, հղիության և ծննդաբերության պաթոլոգիաները, պտղի վարակիչ հիվանդությունները և այլն (Е. М. Белостоцкая, 1958; Л. А. Дымшиц, 1963; В. И. Морозова, А. А. Яковлев, 1982; Ռ. Ն. Ագարյան, 2008): Տեսողական խանգարումները պայմանավորված են սոցիալական և կենցաղային պայմաններով:

Այսօր ակնհայտ է դառնում, որ տեսողության խանգարման հիմնական պատճառներից են նաև տեսողական աշխատանքի ոչ ճիշտռեժիմը, բնական և արհեստական լույսի ոչ ճիշտ օգտագործումը, տեսողական երկարատև և անդադար լարվածությունը, համակարգչով ճիշտ չկառավարվող խաղերն ու պարապմունքները, հեռուստահաղորդումներ դիտելու կանոններին և պահանջներին չհետևելը, շարժողական անբավարար ակտիվությունը և այլն: Այլ կերպ ասած՝ չի կարելի առանձնացնել տեսողական խանգարումների առաջացման վրա ազդող մեկ գործոն: Պարզապես պետք է միայն մտածել տվյալ պայմաններում այս կամ այն գործոնի գերակայության մասին:

Ելնելով այս դրույթից՝ պետք է երեխաների տեսողության խանգարումը դիտել մեծ և բարդ խնդիր, որտեղ կարևորը երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման համար մանկավարժական հատուկ պայմանների առկայությունն է:

**Երրորդ՝ «Երեխաների տեսողության պահպանումը և դրա խանգարումների կանխարգելումը որպես մանկավարժական կարևոր խնդիր» ենթապլյուսումնազված է,** որտեղ երեխաների առողջական վատ վիճակը և օրգանիզմում ընդհանուր պաթոլոգիկ գործընթացները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ տեսողական գործառույթի վրա՝ ստեղծելով կարճատեսության պայմաններ: Երեխաների լավ տեսողության պահպանման հարցում կարևոր նշանակություն ունեն բնական և արհեստական լույսի ճիշտ օգտագործումը, խաղալու, նկարելու և ուսումնական այլ գործընթացների ժամանակ տեսողական աշխատանքի կանոնների ռեժիմի և հանգստի պահպանումը, աչքի վնասվածքների և հարվածների նախազգուշացումը և այլն: Դրա համար էլ երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման միջոցները և մոտեցումները պետք է ընտրվեն ու մշակվեն այդ պատճառներին համապատասխան: Հենց այս հանգամանքն էլ երեխաների տեսողության պահպանումն ու դրա խանգարումների կանխարգելումը որոշում է որպես մանկավարժական կարևոր հիմնախնդիր:

**Չորրորդ՝ «Հետազոտության տեսանկյունների հիմնավորումը, խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը» ենթապլյուսումնաբերկայացված է,** որհետազոտվող հարցերի բազմակողմանի ուսումնասիրումը, նրա որոշման համար տեսական մոտեցումների, մանկավարժական պայմանների մշակումն

այսօր համարվում է այս խնդրի որոշման կարևոր ուղի: Հիմնախնդրի նշանակությունը որոշվում է հիմնականում 2 տեսանկյուններով

- գործունեության տարբեր ձևերում նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական աշխատանքի պայմանների ուսումնասիրումը,

- նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և մանկավարժական պայմանների մշակումը:

Ներկայացված տեսանկյուններն էլ դարձել են մեր աշխատանքի հետազոտության առարկան: Ընդհանուր և մասնակի խնդիրների լուծման համար մերկողմից կիրառվել են ժամանակակից տեսական և էմպիրիկ մեթոդներ:

Ատենախոսության **երկրորդ` «Մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման մանկավարժական պայմանների ուսումնասիրում»** գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին` **«Մանկապարտեզում և ընտանիքում երեխաների տեսողական աշխատանքների պայմանների բնութագիրը»** ենթաալխում ներկայացված են 58 մանկապարտեզներում և 75 ընտանիքներում երեխաների տեսողական աշխատանքի պայմանները, հետազոտության արդյունքները: Անցկացվող հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ուսումնասիրված բոլոր մանկապարտեզներում և ընտանիքներում գիտակցում են նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական աշխատանքի բարենպաստ պայմանների և տեսողության խանգարման կանխարգելման աշխատանքների անցկացման կարևորությունը: Սակայն գործնականում այդ աշխատանքներն ամբողջությամբ չեն իրագործվում: Այսպես, միայն 13 մանկապարտեզում (22,4%) և 11 ընտանիքներում (14,7%) կային լավ պայմաններ երեխաների տեսողական աշխատանքի և տեսողության խանգարման կանխարգելման համար, այն դեպքում, երբ ուսումնասիրված հաստատությունների 77,6% և 85,3 % ընտանիքներում տեսողության պահպանման հանդեպ մոտեցումները միջին և միջինից ցածր էին: Հետազոտված մանկապարտեզների և ընտանիքների մեծ մասում չէին պահպանվում 4-6 տարեկան երեխաների տեսողական աշխատանքի և հանգստի ռեժիմը, աչքից մինչև խաղալիքը, տեսրը կամ գիրքը պահանջվող հեռավորությունը, տեսողական մյուս աշխատանքների դեպքում գլուխը չափից ավելի թեքում էին առաջ կամ կողք: Մեծերիկողմից հատկապես ընտանիքներում երեխաների զբաղմունքները չէր վերահսկվում և չէր կառավարվում: Մեր դիտարկումները ցույցովեցին, որ ուսումնասիրված մանկապարտեզների մեծ մասում պատուհաններին կախված էին տարբեր գույների վարագույրներ, իսկ պատուհանագոգերին դրված էին ծաղիկներ, որոնք խանգարում էին բնական լույսի ներթափանցմանը: Այս ամենը, բնականաբար երեխաների տեսողական աշխատանքի համար ստեղծում էր անբարենպաստ պայմաններ` հանգեցնելով աչքերի մշտական լարվածության:

Երկրորդ` **«Գործունեության տարբեր ձևերում նախադպրոցականների տեսողական աշխատանքների բնույթի հետազոտումը»** ենթաալխում ներկայացված են նախադպրոցականների գործունեության ձևերը, որոնք

Ժամանակ մեծ մասամբ չեն պահպանվում տեսողական աշխատանքների երեխաների տեսողական աշխատանքի նորմերի և կանոնները, խանգարումների բնույթը և աստիճանը խաղային, ուսումնական և գործունեության մյուս ձևերում, նախադպրոցականների այն վատ սովորությունները, որոնք բացասաբար են ազդում տեսողական աշխատանքի վրա:

Ելնելով հետազոտության ընդհանուր հիմնախնդրից՝ կարևոր էր նաև որոշել ծնողների վերաբերմունքը երեխայի գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքի համար նորմալ պայմանների ստեղծման ուղղությամբ: Ծնողների 68,6%-ը անկեղծորեն նշում էր, որ իրենք չունեն բավականին տեղեկատվություն և համապատասխան գիտելիքներ երեխաների գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքի բնույթի և պայմանների վերահսկողության կազմակերպման ու անցկացման վերաբերյալ: Նման իրավիճակները նրանք բացատրում են հետևյալ հիմնական պատճառներով՝ ուրջ չեն վերաբերվում այդ հարցերին, տնային գործերով զբաղվածությունը, տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման համապատասխան գրականության, մեթոդական առաջարկների բացակայությունը, ընտանեկան բարենպաստ, արդյունավետ պայմանների բացակայությունը և այլն:

**Երրորդ՝ «Երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման հարցերում ծնողների և մանկապարտեզի դաստիարակների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությունը» ենթազխում** ներկայացված են սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, որոնք ցույց տվեցին, որ մանկապարտեզների դաստիարակները և ծնողները ամբողջությամբ ցուցաբերեցին դիտարկվող հիմնախնդրի մասին բավականին ցածր մակարդակ: Ուշագրավ է, որ հետազոտվող մանկապարտեզների դաստիարակների 64,0%-ը և ծնողների 72,4%-ը չկարողացան ամբողջությամբ բացել տեսողական աշխատանքի այն պայմանները, որոնք անհրաժեշտ են պահպանել օրվա ընթացքում լավ տեսողության ապահովման համար: Նրանք չկարողացան նշել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տեսողական աշխատանքի ժամանակ սեղանի մոտոջ ճիշտ դիրքի վերացումը, 4-6 տարեկան երեխաների համար հեռուստահաղորդումներ դիտելու և համակարգչով խաղերի թույլատրվող նորմերի սահմանումը և այլն: Դաստիարակների 89,5%-ը և ծնողների 97,6%-ը չկարողացան նշել երեխաների վնասակար սովորությունները (զլխի թեքումը կողք, նայել շեղ հայացքով, դիտել հեռուստացույց կամ նկարներ պառկած վիճակում, կկոցում և այլն), որոնք բացասական ազդեցություն ունեն տեսողության վրա, և դրանց վերացման մոտեցումները: Շատ դաստիարակներ և ծնողներ չկարողացան ճիշտ պատասխանել, թե աչքից ինչ հեռավորության վրա պետք է գտնվի խաղալիքը, տեսորը կամ գիրքը սեղանի մոտ տեսողական աշխատանքի ժամանակ:

**Չորրորդ՝ «Մանկապարտեզի դաստիարակների և ծնողների կողմից տեսողության խանգարման կանխարգելման ուղղությամբ միջոցառումների**

**անցկացման գործնական ունակությունների վերլուծություն» ենթաալյում** ներկայացված են նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման ուղղությամբ միջոցառումների կազմակերպման ու անցկացման ունակությունները:

Երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման գործում մանկապարտեզների դաստիարակների և ծնողների գործնական ունակությունների գնահատման արդյունքները խոսում են փորձարկվողների բավականին ցածր հնարավորությունների մասին: Միայն դաստիարաների 16,5%-ը և ծնողների 8,2%-ը կարողացան ցուցաբերել գործնական կարողություններ: Բացահայտվեց, որ մանկապարտեզների դաստիարակները երեխաներին գործնական օգնություն ցուցաբերելիս հատկապես դժվարանում էին այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ վերացնել վնասակար սովորությունները, որոնք կարող են հանգեցնել աչքերի լարվածությանը (69,3%), կազմել տեսողական աշխատանքի ու հանգստի ճիշտեժիմ խաղային և ուսումնական գործունեության, համակարգչային պարապմունքների և հեռուստահաղորդումների դիտման ժամանակ (66,7%), ձեռնարկել միջոցառումներ տեսողության լարման և աչքերի գերհոգնածության դեպքում (62,3%) և այլն: Ցածր էին նաև դաստիարակների գործնական հնարավորությունները երեխաների տեսողական լարվածության բեռնաթափման համար հատուկ վարժությունների ընտրության (59,7%), սեղանի շուրջ տեսողական աշխատանք կատարելիս երեխաների դիրքի խանգարման վերացման դեպքում (51,8%): Պարզվեց, որ միայն դաստիարակների 20,2%-ը և ծնողների 12,9%-ը կարողացան ճիշտ տեղակայել լուսավորության աղբյուրը (սեղանի լամպը) սեղանի շուրջ երեխաների տեսողական աշխատանքի դեպքում, տեղադրել ձողաջահը կամ ստեղծել բարենպաստ լուսավորություն, երեխաների կողմից հեռուստահաղորդումներ դիտելիս: Դաստիարակների ավելի քան 66%-ը և ծնողների 74%-ը առաջարկել երեխաների տեսողական աշխատանքի օրինակելի ռեժիմ, չկարողացան որոշել, թե 4-6 տարեկան երեխան որքան ժամանակ առանց ընդմիջման պետք է զբաղվի նկարչությամբ, դիտի հեռուստացույց, զբաղվի համակարգչով, որքան պիտի լինի դադարն այդ պարապմունքների ժամանակ և այլն: Դաստիարակների միայն 25,4%-ը և ծնողների 11,0%-ը կարողացան 4-6 տարեկան նախադպրոցականներին տեսողական աշխատանքի համար ճիշտնստեցնել սեղանի շուրջ, սահմանեցին աչքից մինչև խճանկարը, տեսող կամ գիրքը պահանջվող հեռավորությունը: Անցկացված հետազոտության արդյունքները ցույցտվեցին, որ դաստիարակների և ծնողներիօչլիարժեք իրազեկվածությունը, ինչպես նաև գործնական ունակությունների ցածր մակարդակը բերում են նրան, որ տեսողության պահպանման և դրա խանգարման կանխարգելման ողջաշխատանքը կրում է տարերային բնույթ, նրանց կողմից չվերահսկվող և չուղղորդվող:

**Ատենախոսության՝ երրորդ «Նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման**

բովանդակությունը և դրա իրականացման աշխատանքների մանկավարժական պայմանները» գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին՝ «Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների կազմակերպման և անցկացման հիմնական դրույթները» ենթագլխում ներկայացված են մանկավարժներում և ընտանիքներում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման աշխատանքների կազմակերպման ու անցկացման մանկավարժական պայմանների և մոտեցումների մշակման համար ընդհանուր և հատուկ դիդակտիկ սկզբունքներ: Այն է՝

- ուսուցման միջոցների և բովանդակության գործառույթային ուղղվածությունը,
- տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական պայմանների, մոտեցումների, միջոցների բովանդակության համակարգի ամբողջությունը,
- երեխաների տեսողության պահպանման խնդրին համալիր մոտեցումը,
- երեխաների տեսողական աշխատանքի և հանգստի ռեժիմի անընդհատ վերահսկումը, գործունեության տարբեր ձևերում տեսողական նորմերի և կանոնների պահպանումը:

Հատուկ սկզբունքներից առանձնացրել ենք՝

1. Տեսողական աշխատանքի ժամանակ վնասակար սովորությունների դրսևորմանը և հաջորդական վերացմանն ուղղված աշխատանքների ուղղությամբ մակավարժական մոտեցումների և բովանդակության մշակումը:

2. Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելմանը նպաստող մանկավարժական մոտեցումների ուղղվածություն և պայմանների ստեղծում.

- տեսողական տարբեր աշխատանքների ժամանակ բնական և արհեստական լույսի ճիշտ օգտագործում,

- սեղանի շուրջ, հատակին, հեռուստացույց դիտելու, համակարգչով պարապելու և այլ տեսողական աշխատանքների համար համանապատասխան պայմաններ ու կանոններ,

- աչքի, ձեռքերի և դեմքի մաքրություն, կայուն սովորությունների դաստիարակում, մաքուր օդում լինելու ռեժիմի պահպանում, առողջության ամրապնդման միջոցներ

- գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքների և հանգստի ռեժիմի պահպանում,

- տեսողական լարվածության և հոգնածության վերացման համար հատուկ վարժություններ և միջոցառումներ:

3. աշխատանքի ուղղվածություն երեխաների առարկայագործնական գործունեության անցկացման անվտանգության ուղղությամբ՝ կապված կտրող առարկաների հետ, աչքի վնասվածքների կանխարգելում:

Մանկավարժական պայմանների և մանկավարժական գործընթացի առանձին բաղադրիչների իրականացման ուղիների որոշման համար այսպիսի

մոտեցումը՝ պայմանավորված տեսողության խանգարման կանխարգելմամբ, թույլ է տալիս այն դիտել որպես մանկավարժական փոխազդեցության միջոցներով նախադպրոցական տարիքի տեսողության պահպանման աշխատանքի համակարգի հիմք: Հենվելով գործնականում դրված մոտեցումների վրա՝ պայմանավորված մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների նորմալ տեսողական աշխատանքի համար պայմանների ստեղծմամբ, ծնողների և դաստիարակների կողմից անհրաժեշտ հսկողության բացակայությամբ և ոչ ճիշտ կատարմամբ, մերկողմից ընտրվել, մշակվել և համակարգվել են տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելմանն ուղղված մի քանի մոտեցումներ, առաջադրանքներ, վարժություններ և դրանց անցկացման պայմաններ:

**Երկրորդ՝ «Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման տեսական մոտեցումները, մանկավարժական պայմանները և գործնական ուղիները» ենթաալյուսում** ներկայացված են երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման, մանկապարտեզի և ընտանիքի պայմաններում տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական և կազմակերպչական միջոցների համակարգերը, երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական մոդելը և նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման աշխատանքների բովանդակությունը:

Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման տեսական մոտեցումները, մանկավարժական պայմանները և գործնական ուղիներն առաջին հերթին պետք է ուղղված լինեն՝

1. գործունեության տարբեր ձևերում երեխաների տեսողական աշխատանքի պայմանների բարելավմանը՝ բնական և արհեստական նորմալ լուսավորություն, աչքի ճիշտ աշխատանքի և հանգստի ռեժիմ և այլն

2. մանկապարտեզների դաստիարակների և ծնողների տեսական գիտելիքների ձևավորմանը և գործնական ունակությունների զարգացմանը՝ գործունեության տարբեր ձևերում նախադպրոցական տարիքի երեխաների տեսողական աշխատանքի ռեժիմը, կանոնները և նորմերը պահպանելու համար

3. նորմալ պայմաններում երեխաների մոտ դաստիարակել տեսողական աշխատանք կատարելու սովորություն:


Երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման ընդհանուր համակարգը կարելի է ներկայացնել հետևյալ բաժիններով՝ համակարգի հիմքը, մանկավարժական և կազմակերպչական միջոցառումների համակարգը, աշխատանքի բովանդակությունը և մանկավարժական մոդելը: Այս համակարգի հիմքը կազմում են հնարները, տեսական-մեթոդական, ծրագրային-նորմատիվ հիմքերը և կազմակերպչական ձևերը: Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման համար մանկավարժական և կազմակերպչական միջոցառումների մշակված համակարգը ենթադրում է լայն ծրագիր, տեսական տեղեկությունների և տեսական գիտելիքների ձևավորում, երեխաների տեսողության պահպանման համար ձեռքբերած հմտությունների ամրապնդում: Այն ներառում է նաև

երեխաների տեսողության պահպանման համար հիմնական պահանջներին հետևելու և կատարելու կարողության զարգացման մակարդակի գնահատականին ուղղված աշխատանք (նկար 1): Մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման համար ներկայացված մանկավարժական և կազմակերպչական միջոցառումների համակարգն ուղղված է նաև տեսողության պահպանման համար անցկացվող միջոցառումների նկատմամբ երեխաների հետաքրքրությունների և դրական վերաբերմունքի ձևավորմանը, գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքի նորմերի և կանոնների կատարման տեսական տեղեկությունների և գործնական ունակությունների զարգացմանը՝ խաղ, նկարչություն, ընթերցանություն, հեռուստացույցի դիտում, համակարգչով պարապմունքներ և այլն: Վերոնշյալի հիման վրա մերկողմից մշակվել է նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական օրինակելի մոդել, որը ներառում է նպատակը և խնդիրները, բովանդակությունը, ձևերը, մեթոդները, պայմանները ստուգումը և սպասվելիք արդյունքները (նկար 2) :

Երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման մերկողմից առաջարկված համակարգի կենտրոնական մասը համարվում են նրանց անցկացման աշխատանքի բովանդակությունը և մանկավարժական պայմանները:

Այս համակարգի հիմնական մասն են համարվում՝


- անհրաժեշտ չափով լուսավորվածության կարգավորումը, բնական և արհեստական լույսի ճիշտ միավորումը, սեղանի, համակարգչի մոտ, հեռուստացույց դիտելիս տեսողական աշխատանք կատարելու և հանգստի ժամանակ լույսի աղբյուրի ճիշտ ուղղվածությունը և այլն,
- գործունեության տարբեր ձևերում տեսողական աշխատանքի և հանգստի ռեժիմի ճիշտ կարգավորումը՝ մանր առարկաներով խաղի ժամանակ,
- սեղանի մոտ տեսողական աշխատանքի կանոնների պահպանումը՝ մարմնի, գլխի, ձեռքերի և ոտքերի դիրք, տեսողական աշխատանքի և հանգստի ռեժիմ, հետևել աչքի հեռավորությանը գրքից և այլն,
- տեսողական աշխատանքի ժամանակ վնասակար սովորությունների վերացում՝ տետրի կամ գրքի վրա չափից դուրս գլխի թեքում, գլխի թեքում դեպի կողք, մեկ կամ երկու աչքի կկոցում, պառկած կամ կիսապառկած վիճակով ընթերցանություն, գրավոր և այլն,
- առողջության ամրապնդում՝ ֆիզիկական վարժություններով պարապելու հանդեպ հետաքրքրության դաստիարակում, մաքուր օդում զբոսանքներ, խաղեր, պարապմունքներ, կոփող միջոցառումների կատարում և այլն:



Գծ. 1. Մանկապարտեզի և ընտանիքի պայմաններում երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական և կազմակերպչական միջոցների համակարգ



**ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ  
ՏԵՍՏՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ**



Գծ. 2. Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման մանկավարժական մոդելը

Այսպիսով՝ նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման աշխատանքների կազմակերպման և անցկացման համար առաջ քաշած հիմնական սկզբունքները, առաջարկված տեսական մոտեցումները, երեխաների տեսողության պահպանման մանկավարժական պայմանները և օրինակելի համակարգը թույլ է տալիս ժամանակին և երկար տարիներ ապահովել լավ տեսողություն:

Մեր կողմից իրականացրած մանկավարժական և տեսական ուսումնասիրությունների հանրագումարում ի վերջո հանգել ենք հետևյալ **եզրակացությունների**՝

1. Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանումը միշտ էլ գտնվել է գիտնականների, բժիշկների, ֆիզիոլոգների, հոգեբանների և մանկավարժների ուշադրության կենտրոնում: Ակնհայտ է դառնում, որ երեխաների տեսողական աշխատանքի բարենպաստ պայմանների ստեղծումից, տեսողության խանգարումների կանխարգելման հարցերի վերաբերյալ մանկապարտեզի դաստիարակների և ծնողների

իրագրվածությունից է հիմնականում կախված մանկապարտեզներում և ընտանիքում այդ աշխատանքների ճիշտ դրվածքը: Այս առումով դեռևս հիմնախնդրի վերաբերյալ առկա են տարաբնույթ գիտական մոտեցումներ:

2. Հետազոտությանը ստացված արդյունքները հիմնավորեցին, որ տեսողական աշխատանքի մանկավարժական պայմաններին, նորմերին, կանոններին և պահանջներին չհետևելը հանգեցնում է տեսողության մասնակի կամ լրիվ կորստի: Մանկական տարիքում այս խանգարումները բացասական ազդեցություն են թողնում երեխայի հոգեֆիզիկական զարգացման վրա: Այս խանգարումները հատկապես դժվարացնում են խաղային, ուսումնական, աշխատանքային և գործունեության այլ ձևերի անցկացումը, որոնք միտված են դպրոցում ուսուցման նախապատրաստմանը, կյանքում և հասարակության պայմաններում ինքնուրույն հարմարեցմանը:

3. Հետազոտության արդյունքները փաստեցին, որ հարցման մասնակից դաստիարակների և ծնողների մեծ մասը գիտակցում է երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման կարևորությունը, սակայն գործնականում այս հիմնախնդրի շատ հարցեր մնում են անուշադրության կենտրոնում և չեն ստանում գործնական լուծումներ: Այս առումով դաստիարակների և ծնողների իրագրվածության մակարդակը բավականին ցածր էր:

4. Մեր կողմից մշակվել են մանկապարտեզներում և ընտանիքներում երեխաների տեսողության կանխարգելման աշխատանքների տեսական մոտեցումներ, մանկավարժական պայմաններ, կազմակերպման և անցկացման գործնական ուղիներ: Ատենախոսության մեջ ներկայացվել է նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և դրա խանգարումների կանխարգելման համակարգի ընդհանուր գծապատկերը:

5. Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման համար առաջին անգամ մեր կողմից մշակվել է մանկավարժական նոր մոդել, որը ներառում է նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության կանխարգելման նպատակը, խնդիրները, բովանդակությունը, ձևերը, մեթոդները, ստուգման պայմանները և սպասվող արդյունքները:

Հետազոտության արդյունքների հիման վրա տպագրվել են հետևյալ հոդվածները.

1. Ն. Պ. Գրիգորյան, Նախադպրոցական տարիքի երեխաների տեսողության պահպանման և կանխարգելման հիմնախնդիրը, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» միջբուհական գիտամեթոդական հոդվածների ժողովածու, 2009, N 8, էջ 29-31:

2. Ռ. Ն. Ազարյան, Ն. Պ. Գրիգորյան, Մանկապարտեզում և տանը երեխաների տեսողության պահպանման մանկավարժական պայմանների հետազոտում «Խ. Արմավյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողով», 2012 էջ 82-86:

3. Н. П. Григорьян, Уровень информированности родителей и воспитателей детских садов в вопросах охраны зрения и профилактики ее нарушений у детей, «Манкավարժական միութե», 2012, N 3-4, էջ 45-50:

4. Ն. Պ. Գրիգորյան, Երեխաների տեսողության խանգարումների կանխարգելման տեսական մոտեցումները, մանկավարժական պայմանները և գործնական ուղիները, «Մանկավարժական միտք», 2013N 1-2, էջ 122-128:

**Григорян Наира Павлушовна**  
**Педагогические условия охраны зрения и профилактики ее нарушений у**  
**детей дошкольного возраста**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01-“Теория и история педагогики”.

Защита состоится 27 сентября 2013г. в 14<sup>00</sup> на заседании специализированного совета 065 “Педагогика” ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете по адресу 0025, Ереван, ул. Абовяна 52<sup>а</sup>

**Резюме**

**Актуальность исследования.** Известно, что из всех органов чувств человека зрение считается наиболее важным. Однако уже в дошкольном возрасте, в связи с ранней зрительной нагрузкой детей, выполняемых при плохом освещении, несоблюдения режима зрительной работы и отдыха глаз, просмотре телепередач и занятие на компьютере и т.д., у них может появиться близорукость. Нарушение зрения в детском возрасте приводит к ухудшению состояния здоровья, появлению вторичных отклонений в психофизическом развитии, возникновению недостатков в формировании некоторых личностных качеств детей. Все это значительно затрудняет познавательную, игровую, учебную, трудовую и другие виды деятельности этих детей. Поэтому охрана зрения и профилактика ее нарушений является одной из важных проблем медицины, педагогики и психологии.

Актуальность темы исследования определяется так же и тем, что в научно-педагогической литературе почти не изучены педагогические подходы и условия охраны зрения у детей и профилактики ее нарушений. Недостаточная теоретическая и практическая разработанность этой проблемы значительно осложняет организацию педагогической работы в дошкольных учреждениях и семьях по охране зрения и профилактике ее нарушений у детей. Поэтому изучение этой проблемы, разработка теоретических и практических подходов ее решения является весьма актуальной.

**Цель исследования-**изучить условия зрительной работы детей дошкольного возраста в различных видах деятельности и разработать теоретические подходы и систему охраны зрения и профилактики ее нарушений.

**Научная новизна исследования состоит:**

- в разностороннем и комплексном изучении педагогических условий охраны зрения у детей в детских садах и семьях;

- в изучении постановки работ по профилактике нарушения зрения у детей в детских садах и семьях;
- в определении уровня информированности воспитателей детских садов и родителей в вопросах охраны зрения и профилактики ее нарушений у детей;
- в разработке теоретических подходов, педагогических условий и примерной системы для охраны зрения у детей и профилактики ее нарушений.

**Теоретическая и практическая значимость исследования** определяется теоретическим обоснованием эффективности рекомендованных педагогических подходов и условий для организации и проведения работ по охране зрения и профилактике ее нарушений у детей, а также в теоретическом обосновании полученных результатов исследования.

Разработаны теоретические аспекты, педагогическая система и практические пути охраны зрения у детей и профилактики ее нарушений в условиях детского сада и семьи. Результаты исследования внедрены в практику дошкольного воспитания детей.

**Апробация результатов исследования.** Основные положения, результаты и выводы диссертации докладывались и обсуждались на научных конференциях и заседаниях кафедры педагогики Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна. По теме диссертации опубликованы 4 статьи.

**Структура работы.** Диссертация изложена на 127 страницах и состоит из введения, 3-х глав, заключения, списка использованной литературы и приложения.

**Grigoryan Naira**  
**Pedagogical Conditions of Protection of Vision and Prevention of its impairments of children of preschoolage**

Thesis for Ph.D of Pedagogical Sciences, specialty 13.00.01-"History and Theory of Pedagogy". The defense of the thesis will take place at 14<sup>00</sup> on September 27, 2013, at the session Special Board 065 HAC to award a scientific degree under the YerevanStateUniversity, address: 0025, 52<sup>a</sup>, Abovyan str. Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N203

**Summary**

**Actuality of the research:** It is known that, of all sensory organs of a human being, vision is considered as the most important. However still at preschool age because of the early visual loading children who do visual activities in poor lighting, watch TV without keeping the appropriate regimen and rest for eyes, work on computer, etc., may have shortsightedness. Visual impairment at childhood results in worsening of health condition, occurrence of secondary deviations in psychophysical development and appearance of deficiencies in development of some personal features of children. These all significantly impedes the cognitive, playing, study, working and other kinds of activities of these children. That's why protection of vision and prevention of its impairments is one of the most important issues in Medicine, Pedagogy and Psychology.

The actuality of the research is also defined by the fact that the pedagogical approaches and conditions of protection of vision and prevention of its impairments at childhood are not enough studied in scientific and methodical literature. The fact that this issue is insufficiently developed theoretically and practically, the organization of pedagogical work aimed at protection of vision of children and prevention of its impairments at preschool institutions and families become significantly difficult.

**The objective of the research** is to study the conditions of visual work of preschool aged children in different kinds of activities and to develop theoretical approaches and a system of protection of vision and prevention of its impairments.

**The scientific novelty of the research** consists in:

- All-round and complex study of pedagogical conditions of protection of vision of children at kindergartens and families,
- Study of statement of works on prevention of impairments of vision of children at kindergartens and families,
- Definition of the awareness level of teachers at kindergartens and parents on issues about protection of vision and prevention of its impairments in childhood.

- Development of theoretical approaches, pedagogical conditions and an exemplary system of protection of vision of children and prevention of visual impairments.

**The theoretical and practical importance** of the research is defined by the theoretical justification of efficiency of recommended pedagogical approaches and conditions for organization and performance of works on protection of vision of children and prevention of their visual impairments, and by the theoretical justification of the acquired results of the research. Theoretical aspects, a pedagogical system and practical ways of protection of vision of children and prevention of visual impairments in the settings of kindergartens and families are developed. The results of the research are implemented into the practice of preschool education of children.

**Approbation of the results of the research.** The main statements, results and conclusion of the dissertation have been presented and discussed at scientific conferences and meetings of the Chair of Pedagogy, Gyumri State Pedagogical Institute after M.Nalbandyan. 4 articles on the issue of the dissertation have been published.

**Structure of the work.** The dissertation is stated on 127 pages and consists of the introduction, 3 chapters, conclusion, list of used literature and appendix.